

Ավարտվեց „Սևանա լիճ-2015,, շախմատի միջազգային մրցաշարը

21.07.2015

Հուլիսի 20-ին Մարտունի քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ „Սևանա լիճ - 2015,, շախմատի միջազգային մրցաշարի փակման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանը, Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր, անհատ քաղաքացիներ: Մինչև մրցաշարի փակման հանդիսավոր արարողության մեկնարկը, ներկայացվեց փոքրիկ համերգային ծրագիր: Արարողությունը համընկավ շախմատի միջազգային օրվա հետ, որի առթիվ բոլորին, և հատկապես մրցաշարի մասնակիցներին իրենց ողջույնի խոսքերում շնորհավորեցին մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանը, Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանը: „Ավարտվեց ևս մեկ մրցաշար, որը լի էր լարված, հետաքրքիր և ուշագրավ խաղերով, լեցուն՝ հաղթանակներով: Ինչպես արդեն տեսանելի է, տարեց տարի մրցաշարին մասնակցության հայտ են ներկայացնում ավելի մեծ թվով երկրներ, ինչը հերթական անգամ փաստում է, որ այստեղ աստիճանաբար ընդլայնվում է բարեկամությունը, որն էլ դառնում է մրցաշարի ամենակարևոր և ցանկալի արդյունքը: Մենք այս մրցաշարով նպատակ ունենք շախմատը մասսայական դարձնել նաև դպրոցահասակների շրջանում, ովքեր ամեն օր ուշի ուշով հետևել են խաղերի ընթացքին, և համոզված են, որ մրցաշարի կազմակերպման և անցկացման հարցում ՀՀ շախմատի ֆեդերացիայի և բոլոր աջակիցների սպասումները աստիճանաբար իրականություն են դառնում,, -իր ելույթում նշեց Գեղարքունիքի մարզպետը: „Սևանա լիճ - 2015,, շախմատի միջազգային մրցաշարում առաջին մրցանակային տեղը՝ 6 միավորով, զբաղեցրեց ազգությամբ լեհ, միջազգային գրոսմայստեր՝ Յան Բշիշտոֆ Դուդան, 5,1/2 միավորով՝ երկրորդ մրցանակային տեղում էր իսպանացի, միջազգային գրոսմայստեր՝ Դավիդ Անտոն Գուիջարոն և Հնդկաստանը ներկայացնող միջազգային գրոսմայստեր՝ Վիդիթ Սանթոս Գուլջարին, հավաքելով 5 միավոր, զբաղեցրեց 3-րդ մրցանակային տեղը: „Սևանա լիճ - 2015,, շախմատի միջազգային մրցաշարի բոլոր մասնակիցների և մրցավարական կազմի համար հուշամեդալներ, պատվոգրեր և նվերներ էր նախապատրաստվել Մարտունու քաղաքապետարանի կողմից: Մրցաշարի 1- 4-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներին նվերներ հանձնվեց ՀՀ շախմատի և 1-3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրած մասնակիցների համար՝ Գեղարքունիքի մարզի շախմատի ֆեդերացիաների կողմից: Մրցաշարը լավագույնս կազմակերպելու և նրա աշխատանքներին աջակցելու համար մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանին շնորհվեց ՀՀ շախմատի ֆեդերացիայի պատվոգիր: Շախմատը մարզում մասսայականացնելու, մրցաշարի կազմակերպման հարցում ներդրած ավանդի համար ՀՀ շախմատի

Ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանն արժանացավ Գեղարքունիքի մարզպետի հուշամեդալին: Մրցաշարի ողջ ընթացքը լավագույնս լուսաբանելու համար Մարտունու „Ջանգակ,, հեռուստաընկերության ներկայացուցիչ Դավիթ Երանոսյանը պարգևատրվեց ՀՀ շախմատի ֆեդերացիայի հուշամեդալով: Տոնական հրավառությամբ, բարեկամական ջերմ մթնոլորտում եզրափակվեց միջոցառումը, 2016 թվականին կրկիրն հանդիպելու սպասումներով: